ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2016 թվականի N 77-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20- Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և համաձայն Կապանի N 6 հիմնական դպրոցի խորհրդի նախագահի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 26/6891-16 գրավոր առաջարկության, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման N 5-րդ հավելվածում «Ղազարյան Սամվել» և «Աբգարյան Դավիթ» բառերը փոխարինել «Գևորգյան Վահե» և «Պողոսյան Նաիրա» բառերով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. սեպտեմբերի 19
ք. Կապան